Հավելված 8

Հաստատված է
Տնօրինության 21.05.2024թ.-ի
Թիվ DEC 12-32 արձանագրությամբ
Ուժի մեջ է 22.05.2024թ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ	
Վարկի նպատակը	ք.Երևան, Առնո Բաբաջանյան 42/5 և ք.Երևան, Հրաչյա Աճառյան փողոցի N 53 հասցեում կառուցվող շենքերից բնակարանի/ավտոկայանատեղի գնման իրավունք կամ գույք ձեռքբերման նպատակով
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	2,000,000-150,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	60-240 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույքներ /Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույք/	12.75% տոկոսադրույքը կարող է ճշգրտվել սկսած 37-րդ ամսվանից
Տարեկան փաստացի տոկոսադրույք	13,51%
Տարիքային սահմանափակում	18-65 տարեկան ֆիզիկական անձանց
Կանխավճար	Բնակարանի համար սկսած՝ 10% Ավտոկայանատեղիի դեպքում՝ սկսած 20%-ից
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ փուլային կամ միանվագ •**առաջին փուլ՝** բնակարանի **կողմնորոշիչ** գնի 80 տոկոսի և ավտոկայանատեղիի համար՝ արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար, •**երկրորդ փուլ՝** բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը, ինչպես նաև միավորի գնի և միավորի կողմնորոշիչ գնի միջև դրական տարբերություն առաջանալու դեպքում՝ **լրավճարը*** և ավտոկայանատեղիի արժեքի 80 տոկոսը, *լրավճարը՝ բնակարանի և կողմնորոշիչ գների տարբերություն
Կողմնորոշիչ գին	• **ք.Երևան, Առնո Բաբաջանյան 42/5 շենքում՝** -բնակարանի համար՝ նախագծային մակերեսի 97 տոկոսը բազմապատկած բնակարանի 1 քմ արժեքով՝ 414,000 դրամով (առանց ներքին հարդարման՝364,000 դրամ): -ավտոկայանատեղիի համար՝ հաստատուն՝ 3,500,000 դրամով: • **ք.Երևան, Հրաչյա Աճառյան փողոցի N 53 հասցեում՝** -բնակարանի համար՝ նախագծային մակերեսի 97 տոկոսը բազմապատկած բնակարանի 1 քմ արժեքով՝ 448,000 դրամով (առանց ներքին հարդարման՝398,000 դրամ): -ավտոկայանատեղիի համար՝ հաստատուն՝ 4,400,000 դրամով:
Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ	Անուիտետ/Դիֆերենցված

Հավելված 8

Հաստատված է
Տնօրինության 21.05.2024թ.-ի
Թիվ DEC 12-32 արձանագրությամբ
Ուժի մեջ է 22.05.2024թ

	Մայր գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարում/Մայր գումարի ամսական հավասարաչափ վճարում
Գրավի առարկա	Ձեռքբերվող անշարժ գույք/գնման իրավունք, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բնակելի անշարժ գույք:
Վարկ/Գրավ (LTV) առավելագույն արժեք	Բնակարանի դեպքում՝ 90% Ավտոկայանատեղիի դեպքում՝ 80% Եթե վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը կազմում է 50% , եկամուտ-ծախսերի վերլուծությունը կատարվում է պարզեցված եղանակով (մինչև 30 մլն ՀՀ դրամ վարկի դեպքում)
Ապահովագրություն	Չի պահանջվում
Գրավի գնահատում	Անշարժ գույքի գնման իրավունքի ձեռքբերման դեպքում գնահատում չի իրականացվում: Որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված օֆերտայում նշված կողմնորոշիչ գինը: Անշարժ գույքը սեփականության վկայական ստանալուն պես գույքը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողի կողմից: Լրացուցիչ գույքը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերության կողմից:
	Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ
Վարկառու	Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված ֆիզիկական անձ (ծրագրի շահառու)
Համավարկառու	Ծրագրի շահառուի ընտանիքի անդամները, ինչպես նաև երրորդ անձինք (այդ թվում՝ ընտանիքի անդամ չհանդիսացող):
Վարկառու/Համավարկառու վարկային պատմության ներկայացվող պահանջ	•Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով, •Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր /մարված և գործող/ վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 60 օրացուցային օրը
Վարկառու/Համավարկառու ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտի (ԸՊԵ կամ OTI)առավելագույն հարաբերակցությունը	ԸՊԵ≤ 60%
Վարկի հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում
Վարկի տրամադրման միանվագ վճար	Չի պահանջվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	0,1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0,13% օրական

Հավելված 8

Հաստատված է
Տնօրինության 21.05.2024թ.-ի
Թիվ DEC 12-32 արձանագրությամբ
Ուժի մեջ է 22.05.2024թ

Վարկի վաղաժամկետ մարում	Չի կիրառվում
Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով	- սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ, -իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 – 52,000 ՀՀ դրամ, -նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ, - գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ: Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝	•Կայուն եկամտի աղբյուր (ներառյալ եկամուտի երկրորդային աղբյուրները, ընդ որում երկրորդային եկամուտներ ունենալու դեպքում Վարկառուն հնարավորինս պետք է հիմնավորի դրանք համապատասխան փաստաթղթերով), • դրական կամ չեզոք վարկային պատմություն, • գրավի առարկայի համապատասխանություն Բանկի կողմից ընդունելի չափանիշներին, •արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր:
Վարկը մերժելու գործոններն են	•Բացասական վարկային պատմություն •Անբավարար եկամուտ •հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ, •վարկառուն տրամադրել է ոչ արժանահավատ տեղեկատվություն:
Ծրագրին վերաբերող այլ մանրամասների հղումներ	! Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը կարգավորվում են՝ •Քաղաքաշինության կոմիտե՝ https://minurban.am/hy/hanrayinbn •ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1826 - Ն որոշման •ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի N 518 - Ն որոշման

Ծանոթություն

Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները Հաճախորդին տրամադրվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ և տրամադրվում է նաև յոթ օր մտածելու ժամանակ:

1.Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

2.Ստորև ներկայացվում է ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը.

Հավելված 8

Հաստատված է
Տնօրինության 21.05.2024թ.-ի
Թիվ DEC 12-32 արձանագրությամբ
Ուժի մեջ է 22.05.2024թ

Ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).

Բազային տոկոսադրույք

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՏՃ= ՏԲ+ՏՀ

Որտեղ՝

Տճ-Ճշգրտվող տոկոսադրույք,

ՏԲ– Բազային տոկոսադրույք,

ՏՀ– Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:

Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք - ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ https://www.cba.am/am

Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք - ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերություն՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ – 5 տոկոսային կետ

Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայում/սահմանում - պայմանագրի կնքումից 3 /երեք/ տարի հետո

Պարբերական վերանայումներ - յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը)

Ճշգրտվող տոկոսադրույքների կիրառման ամսաթիվ - փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրվան հաջորդող մոտակա մարման ամսաթիվը

Ճշգրտվող տոկոսադրույքների կլորացում - մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:

Օրինակ 1՝ եթե գործող դրամային վարկի տոկոսադրույքը 13.5% է և ենթադրենք վարկի տրամադրումից անցել է 3 տարի և Բազային տոկոսադրույքը այդ պահին 9% է: Հաշվարկվող նոր Ճշգրտվող տոկոսադրույքը կստացվի 9% + 4% = 13%:

3.Գրավի և իրավունքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման:

4.Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:

5. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 5 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 30 օրացուցային օր:

6. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, տոկոսների, Վարկի գումարի

մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

7. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են՝ վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսները, միջնորդավճարները և սպասարկման վճարները (առկայության դեպքում), իսկ տույժերը/տուժանքները (առկայության դեպքում) վարկի մարման նպատակով կատարված փոխանցումների համար և/կամ այլ գործառնությունների համար գանձվող միջնորդավճարները, վարկի սպասարկման նպատակով բացված հաշիվների սպասարկման համար գանձված գումարները, գործարքի նոտարական վավերացման, գրավադրվող գույքի պետական գրանցման և գնահատման դիմաց 3-րդ անձանց վճարված գումարները նվազեցման ենթակա չեն:

8. Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

- Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

- Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող Այլ ծառայությունների սակագների:

9. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

10.Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

11. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

Հավելված 8

Հաստատված է
Տնօրինության 21.05.2024թ.-ի
Թիվ DEC 12-32 արձանագրությամբ
Ուժի մեջ է 22.05.2024թ

12.ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ www.fastbank.am:

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ, ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԳՐԱՎՈՐ ԴԻՄԵԼ ԲԱՆԿԻՆ ՁԵՐ ԵՎ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԻՐԱՌՎԻ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ 30 ՕՐ ՀԵՏՈ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԵԴԻՏԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: